

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԴՐՈՒԹԵԱՆ
400-ԱՄԵԱԿԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

II

Անցած անգամ մենք տեսանք, որ գոհացուցիչ համարելի չէ կարող ազգային-հասարակական գիտակցութեան այն աստիճանը, որ գոյութիւն ունի ներկայումս՝ մեր կուլտուրական բարիքները իրապէս գնահատելու գործում: Մի կողմից ժողովրդական տղէտ և ճնշւած տարրերի, իսկ միւս կողմից՝ խորթացած, ազգագայնացած «բարձր» ինտելիգենցիա ու բարեկեցիկ դասակարգ—հեռու և անհաղորդ՝ մեր կուլտուրական բարիքները պահպանելու և զարգացնելու գործին:

Փաստեր էք ուզում մեր անգիտակից վերաբերմունքի դէպի հայ կուլտուրական բարիքները: Մի բանի տարի առաջ հայ գրերի զիւտի 1500-ամեակն էր. մի առիթ, որ ոգի պիտի ներշնչէր մեզ ամենքիս՝ ազգովին: Մենք այդ եզակի և հազւադէպ առիթից պիտի օգտւէինք ըստ ամենայնի՝ մեր կուլտուրական կեանքի մակերեւոյթը գէթ մի փոքր բարձրացնելու, որնէ ձեւանարկութիւնով պիտի յաւերժացնէինք հայ պատմութեան ընթացքում տեղի ունեցած ամենափայլուն և ամենամեծ երևոյթը: Բայց մենք լուռ մնացինք, կենդանութեան նշան ցոյց չուէինք:

Դարձեալ՝ մի քանի տարի առաջ ուսանայ աշխարհիկ գրականութեան նահապետի՝ Սաչատուր Աբովեանի ծննդեան 100-ամեակն էր. դեղեցիկ առիթ էր ներկայանում մեզ՝ լուսադոյն կերպով օգտագործելու առիթը՝ յօգուտ մեր գրականութեան, մեր կուլտուրական կեանքի: Բայց մենք լուռութեամբ անցանք այդ օրը, ոչինչ չարինք: Իսկ երբ երկու տարի առաջ Աբովեանին արձան կանգնացնելու հարցը հանդէս բերւեց, մենք չկարողացանք հաւաքել մի փոքրիկ զուժար իսկ՝ այդ նպատակով: Ահա ձեզ մեր ազգային գիտակցութեան աստիճանը:

Մենք կարող էինք շարունակել և ցոյց տալ, որ յաճախ լուռութեան ենք մասնել մեր պատմութեան նշանաւոր դէպքերի, մեր գրականութեան և կեանքի խոշոր դէմքերի 50-ամեակներ, 75-ամեակներ և 100-ամեակներ:

Նայեցէք դուք ուսու հասարակութեան: Ի՞նչպէս են նրանք օգտագործում, կուլտուրական հասարակական տեսակէտից, Լօմօնօստպի և ուրիշները մահւան կամ ծննդեան 100-ամեակները, եւ այս՝ ոչ միայն յաւիտենականացած, պատմութեան սեփականութիւն դարձած խոշոր անձերի վերաբերմամբ, այլ նաև կենդանի, գործող և աշխատող անձերի վերաբերմամբ:

Նոյնը, աւելի լայն և խոշոր չափերով, կատարում են եւրոպական ազգերը: Ի՞նչպէս, օրինակ, գերմանացիները խանդավառութեամբ և մեծ հանդէսներով տօնեցին իրենց ժամանակակից զրոյց

Ջուզերմանի ծննդեան 50-ամեակը, — մի մարդու, որ իր տաղանդի և ոյժերի զարգացման աստիճանի վրայ է գտնուում գեռու: Եւրոպացիները այդ և նման դէպքերից կարողանում են օգտուել՝ իրենց ազգային բարիքները գնահատելու խոր գիտակցութեամբ, նոյն այդ բարիքները լուսադոյն կերպով ճոխացնելու և ոչ մի առիթ բաց չթողնելով:

Դարձրէք դուք ձեր հայեացքը դէպի մեր անմխիթար իրականութիւնը: Մէջ միայն մենք մոռացութեան ենք տալիս, յիշատակութեան իսկ արժանի չենք համարում մեր պատմական անցեալի խոշոր դէպքերի ու դէմքերի 100-ամեակներն իսկ, այլ և, երբեմն, երբ խօսք է լինում մեր գրականութեան ու կուլտուրական կեանքի երախտաւորներին, անհնար աշխատաւորներին, նրանց դասը գրկանքներով լի գործունէութեան յօբելեանները տօնելու և այդ յօբելեանները օգտագործելու մեր իսկ կուլտուրական բարիքները պահպանելու, նոր և երիտասարդ ոյժերին խրախուսելու և դէպի այդ նոյն գործունէութիւնը գրաւելու վերջնական նրպատակով, — այդ իսկ, ասում ենք, հազւադէպ առիթները մենք յաճախ մոռացութեան կամ անտարբերութեան ենք մասնում. պատահում է նոյն իսկ, որ դիւային նենգութեամբ այդ հազւադէպ առիթները մենք ոտնահարում ենք, մենք անձնական գծուծ հաշիւների ենք վերածում և անձին մխասելու գիտաւորութեամբ՝ կուլտուրական բարբերը ոտնահար անում, այդ բարիքները գնահատելու յաջող գիտակցութեան սաղմերը իրենց բնի մէջ իսկ խեղդել ջանում չարախնդարար:

Այն, պակասում է մեզ ազգային գիտակցութիւնը, մենք մեր կուլտուրական բարիքները գնահատել և զարգացնել չենք աշխատում: Եթէ կայ գէթ մի նշոյլ այդ գիտակցութեան, այդ էլ պիտի որոնենք մենք միայն և միայն ժողովրդական առողջամիտ խաւերի մէջ, հասարակական գործունէութեան ծանր լուծը կրող՝ ոչ բազմաթիւ անհատներ, մեր կուլտուրական կեանքի մակերեւոյթը գէթ մի փոքր բարձր պահող գիտակից խաւերի մէջ:

Չխեղդենք այդ գիտակցութիւնը իր սաղմի մէջ. ոյժ, կենդանութիւն տանք նրան, առանց որի չկայ առաջադիմութեան երաշխաւորութիւն:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

(Գեա. Էն. Գործ.)

Թաւրիզ ժողովրդի հոծ բազմութեան ներկայութեամբ հանդիսաւորապէս Թաւրիզ վերադարձաւ երեք տարի սրանից առաջ Ֆրիդայիների կողմից արտաբուժւած ուղղահաւատ մուշտեիդ Միրզա-Հասան աղան, որին ժողովուրդը ասանում էր քաղաքով պատգարակում նստեցրած: Կեանքը նորմալ ընթացք է առնում: Ազգաբնակչութիւնը շատ զո՛ւ է ուժեղ ուսական գնդի տեղումս գտնւելուց, շնորհիւ որի ա-